

ՊԵՏԵՆՆԵՆԻ ԱԳՐՈՒԹԻՒՆԻ
 Պուշկարիոյ համար
 Տարեկան 12 Ֆր.
 Վեցամսեայ 6 »
 Արտասահմանի համար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 ԵՐՊ.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐԵԼԻ
 Իրանուցեան տղայ առաջին
 երեսին համար 40 սակիով
 է. իսկ վերջին երեսի համար
 20 սակիով է. երկրորդին
 առէ ի սակաւներու համար
 20 Օլլ զեղը կըլլայ :
 Վաւանայի համար ձեռքէ 10 սակիով

ՇԱՌԹԻՍ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկեջ
 Խմբագրութեան հասցէի
 —
 Редакция на вестник
 «Шаржумъ»
 Варва
 Redaction du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)
 Իրանուցեան տղայ առաջին
 երեսին համար 40 սակիով
 է. իսկ վերջին երեսի համար
 20 սակիով է. երկրորդին
 առէ ի սակաւներու համար
 20 Օլլ զեղը կըլլայ :
 Վաւանայի համար ձեռքէ 10 սակիով

ՏՕՊՐԻՉԻ ԽՆԴԻՐԸ

Տօպրիչի թաղականութիւնը պաշտօնական յայտարարութեամբ մը հասարակութեան գիտած է, որպէս զի Ազգ. վարժարանին շինութենէն մնացած պարտքը հանգանակութեամբ մը հաւարուի եւ վարժարանին շէնքը վրտանդէ ազատ մնայ :

Պուշկարիոյ արդի տնտեսական խիստ անձո կ վիճակին մէջ, բուր արգաւային հաստատութիւնները, գրեթէ առանց բացառութեան պարտքերու տակ ճնշուած են. եկեղեցիի պարտք, գարոցի շինութեան պարտք, որոնց համար Պուշկարիոյ հայութիւնը տարուէ տարի բաւական կարեւոր գումար մը կը վճարէ իբրև սոկոս, դումար մը՝ որ մեր արդէն իսկ շատ շնչին ազգային պիտու ճէնքերուն մէջ, պիտի կարողանար մեծկակ պակաս մը լրացնելու ծաւալել :

Իբր տոկոս վճարուած այդ գումարները պարտքը վատնուած գրամներ են. Ազգը մեծապէս կը փնտրուի անոնցմէ, եկեղեցւոյն մատակարարութիւնը կանոնաւոր չըլլար, գարոցներուն պիտու ճէնքերը չեն կրնար իրենց հաւասարակշռութիւնը պահել, գործը կը կազայ, կը խանգարուի եւ արգիւնքը կը վիճի շատ անգամ :

Մեր պաշտօնական մարմինները անփոյթ կը մնան, որքան ատեն պարտքի տակոսը վճարելու շափ գրամ մը կրնան ճարել, ե որքան ատեն պարտապահանջը չի նեղեր զիրենք : Խիչախ քայլ մը մեծ, ճիգ մը կատարելով ազգը պարտքէն ազատելու երբեք չեն խորհիր : Աւայս թուրքութիւնը իրենց ամենէն գատապարտելի կէտը պիտի մնայ :

Տօպրիչի թաղականութիւնը սակայն նեղը մնացած է. պարպապահանջները կը սպառնան քանի մը օրէն անուրդի հանել վարժարանը : Ասանկ ազգովին անպատուութեան մը առջեւ թաղականութիւնը իրար անցած է, ե վերջապէս սրտում տուած մեծ քայլը առնելու :

Ազգը հակառակ իր նիւթական ոչ այնքան նախանձելի վիճակին զինքը յուսախար չէ ձգած, անիկա միահամուռ սիրով մը լսած է թաղականութեան խեղճուկ ազգերը եւ 2—3 օրուան միջոցի մը մէջ, միայն Վաւան արդէն 6—700 Ֆր. տուած է :

Տօպրիչի թաղականութեան այս յաջողութիւնը ուրախութեամբ արձանագրելէ ետքը, կը խորհինք թէ ինչո՞ւ Վաւանայի պէս քաղաքի մը ազգ. հաստատութիւնները պարտքի տակ կը մնան, ե 4—5 տարուան ընթացքի մը մէջ կարելի չըլլար 2 3000 Ֆրանքի պարտք մը վճարել :

Ապահովութեամբ ժողովրդին չէ յանցանքը, որովհետեւ փորձը կրկին եւ կրկին ցոյց տուած թէ ժողովուրդը միշտ գիտէ տալ, զրկել ինքզինքը ազգ. նպատակներու համար եթէ իրմէ, ուրուի : Միթէ Տօպրիչի համար մինչեւ հազար Ֆր. վճարող հայութիւն մը՝ իր քաղաքին ազգային պարտքին համար 2—3000 Ֆր. չի պիտի վճարէր :

Ազգային պարտքերը սօփոսական հասոյթներով երբեք չեն կրնար վճարուիլ Պուշկարիոյ մէջ, որովհետեւ այդ հասոյթները շատ անգամ ծախքն իսկ գոցելու անբաւական են : Պէտք է բացառիկ հասոյթներ ստեղծել, ե միանուագ հանգանակութիւնները ամենէն արգիւնաւորներն են :

Ազգ. մարմինները իրենց առջեւ լայն ասպարէզ ունին յաջողութեան, մանաւանդ Պուշկարիայէն դուրս : Ռուսիոյ հայութիւնը իր բոլոր ազգային հաստատութիւններէն զրկուած՝ կը գորդուրայ այսօր արտասահմանի իր ազգակիցներուն բոլոր ձեռնարկներուն վրայ : Եթէ աչքէ անցնենք կոմիտասեան թերթը, միշտ պիտի հանդիպինք կարեւոր կտակներու, նուէրներու սրտնք արտասահմանի ազգ. հաստատութեանց յատկացուած են : Պէտք է օգտուիլ այս արամադրութիւններէն :

Ազգ. մարմիններու այս անփութութիւնը արիւշ հետեւանք մըն

ալ կունենայ որ շատ ցուալի է մեզի համար : Խորհրդները լայն ասպարէզ կը գտնեն խաչագողութեան, կը շորթեն, կը կողպտեն եւ օր մըն ալ իրենց շահատակութիւնները յայտնուելով պատճառ կըլլան անոնց բարի արամադրութեանց խանգարուելու : Արդէն այդ տեսակ փորձ մը բաւական վճատեցուցած է Օտէսայի հայութիւնը, որ քիչ մնաց զոհ պիտի երթար ծանօթ «չվալիէ»ին շահատակութեանց :

ԻՆՉՊԵՏ ԻՅԱՏՏ ԿՈՒՂԱՑ

Դիւրին չէ գտնել լաւ մարդ մը, որ հայրենիքի հանդէպ սէր չի սածէ, ե եթէ ազգէ ազգ, աշխարհի բոլոր մասերն ալ ճամբորդները, ամէն ազգի քով կը գտնենք իր նախահայրերուն ապրած վայրին նկատմամբ մասնաւոր յարում մը :

Եւ սակայն մեր ժամանակները ուղեցին մասնամի տարբեր եղանակ մը ստեղծել : Յնարքի սիրահարներ կը ջանային մեր սրտերէն մէկզի վանել հայրենասիրութեան զգացումը : Աշխարհաքաղաքացի էր իրենց սէր անունը :

«Մտողը աշխարհի կը պատկանի մարդը» : այնպէս կը պահանջէր իրենց նոր վարդապետութիւնը, ե իրենց աշխարհաքաղաքացիութեան բարձունքէն կարեկցութեամբ վար կը նայէին տկար, պղտիկ հոգիներու վրայ, որոնք դեռ հայրենասիրական հոգին կը փարէին : Բայց ճշգրիտ հայեցողութիւն մը իրենց գործերուն եւ բարքերուն վրայ, շափազանց որոշ կերպով ցոյց կուտար թէ ասոնք իրենց բուն հայրենիքի հանդէպ ունեցած պարտաւորութիւններէն խոյս տուելու համար միայն աշխարհաքաղաքացի ըլլալ կուզէին :

Միւս կողմէն սակայն ուրանալու չէ որ հասարակ եւ մեծ մարդակոյտին քով՝ հայրենասիրութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ

ճննդավայրի մասին կոյր նախամեծարում մը, որ մեծաւ մասամբ օտարակենտրոն արհամարհելու և ատելու մէջ կը կայանայ, ըլլայ արուեստական կամ խելքի պակասով կամ ազիտութեամբ և նախապաշարուամբ : Հայրենիք բառը նախնի յոյնին համար ամենէն հրապուրիչ բառն էր, զոր մեծած ատեն իսկ ծիծաղով կարտասանէր : Եւ սակայն որո՞ւ յայտնի չէ թէ, անիկա հպարտ զգացումով մը, ամեն յոյն չեղողը բարբարոս կանուանէր :

Չինացւոց կարծիքով՝ աստղերը միմիայն իրենց սիրելի Չինաստանի վրայ կը հայնն, մինչդեռ բոլոր միւս երկիրները անոնց անհոգութեան ենթարկուած են :

Եթէ Անգլիացի մը ամբողջ աշխարհի մասերը ճամբորդած ալ ըլլայ, դարձեալ ամենէն վերջ կը բացառանչէ. «Միմիայն իր նախնի կողմին վրայ կենանքի կատարեալ հաճոյքը գոյութիւն ունի» :

Փրանսացիք իրենց երկիրը իմացականութեան և հանճարի մէկ հատիկ կայանը կը համարեն աշխարհի մէջ, ե երբեք չեն հաւատար որ Փրանսայէն դուրս գեղեցիկ, մեծ և ազնիւ ու վեհ բան մը գտնուի : Այսպիսի հայրենասիրութիւնը, որ միայն իր «սոսը իբր ուղիղ կը գոզէ եւ աչք, սիրտ և հակացողութիւն չունի ուրիշ ազգերու յաջողութիւնը տեսնելու զգալու և ընդունելու մասին, առաջնութիւն մը ըլլալէ կը զաղրի : Ատոր հակառակ սխալին մէջ ընկզմեցաւ Գերմանացին : Երկար ատեն կը թուէր թէ անիկա հայրենիք չունի և իր ազգէն կամչնայ : Որովհետեւ միայն օտար բանն էր զինքը ամենէն աւելի հրապուրողը, օտարին կը յարէր, զայն կը գոզէր և զայն կը սիրէր :

Յոյնին և Հռոմեացիին համար սակայն հայրենիք բառը կարծես թէ արժաթէ հնչելն մըն էր, որ սիրով կը վառէր անոնց սիրտերը : Անիկա ոչ թէ սիրոյ ու ազատութեան մասին անուրի խօսքերով, նախնեաց զեմ մոլեգին ստիպութեամբ և կամ կողմ

նակալ ու ազանդատը հոգիով— որոնց ետին փառասէրն ու պերճաճօրը կը պահուըտի և որոնք հայրենիքի խոռովութեան ու ապականութեան պատճառներն են—իր սէրը յայտնեց : Այլ, ճշմարիտ ու ազնիւ սէրը գեղեցիկ ու ազնիւ գործերով կը յայտնուի դէպի սիրուած աւարկան : Անիկա վեհանձնութեան անշահասիրութեան և անձնութեան մէջ երեւան կուգայ :

Գարգանքով կը յիշեմ Լիկուրգոս մը, որ թագաւորական դահը կարհամարհէ իր հայրենիքը ազատ պետութեան մը վերածելու համար, կամ Սուլոն մը որ կը համարձակի իր կեանքը Պիսիտրատի դէմ վտանգի ենթարկել, ինչպէս նաեւ Սիլլին որ Հենրիկոս Գ.ի հետ կը վիճէր աներկիւղ և առանց ակնածանքի :

ԲԱՋՈՒԿ
(Շարունակելի)

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

(ՊՈԹԵՎԻ 25 ԱՍԵԱԿԻՆ ԱՌՅԻՒ)

(Շար. 325 քիւհն)

Բայց, երբ պարզուեցաւ դրօշակ մը՝ վրան առեւծով մը երկու օտքի վրայ կանգնած եւ շուրջը գրուած «սգաստութիւն կամ մահ» բառերը, երբ այդ արհեստատրոնները նոյն համազգեստները հագած, նաւուն վերնաշարկը շարուած կեցան, նաւապետը հասկցաւ վերիվերոյ խնդիրը : Իսկոյն Պոթէվ ատրճանակը ձեռքը՝ նաւապետին ներկայացաւ իր նպատակը պարզելով, աղաչեց որ չորգնաւը կեցնէ եւ զիրենք հայրենի հողին վրայ հանէ : Բայց երբ նաւապետէն սերտօժ ստացաւ, Պոթէվ կատողած ատրճանակը այդ անզգայ մարդուն ճակտին ուղղեց եւ բարձրաձայն աղաղակեց : «Ա՛յ, պարոն չէ՛, այս վայրկեանիս դուն չես նաւապետը, այլ ես եմ, եւ պէտք է որ հոս իմ կամքս կատարուի» : Ու այդ հպարտ աւստրիացին, որ պահ մը առաջ Պոթէվը մերժելու համարձակութիւն

ունեցած էր, հազիւ կրցաւ դողդոջալով արտասանել սա բառերը : «Գուկամբղ թող ըլլայ» :

Բաճիկի որ այդ պահուն ճիշդ Քոչլուտույ գիւղին առջեւ հասած էր, անմիջապէս կեցաւ եւ 200 քաչ կարիճներ առեւծի նման վար ցատկեցին, ոտք դրին իրենց հայրենի հողին վրայ : Որ 500 տարիէ ի վեր չէր գաղբած իր անմեղ զաւակներուն արիւնը ծծելէ, եւ ուր այնքան երկարատեւ գերութիւնը շղթաներու մէջ կսպած էր ազատութիւնը եւ մարդկային բոլոր իրաւունքները :

Պոթէվ երեսի վրայ ինկած՝ սկսաւ ջիւղազին համբուրել հողը : կանչեց իր ընկերները եւ անոնցմէ վերջին խոստում առաւ որ ամէն պարագայի մէջ լիսպէս պիտի կատարեն իր հրամանները : Բայց ընկերները կատարեցին երգումը եւ Պոթէվի օրինակին հետեւելով՝ համբուրեցին հողը ու սկսան յառաջանալ դէպի որոշուած կողմը :

Երբ քիչ մը յառաջացան, յուսահատութիւնը սկսաւ տիրել իրենց մէջ, որովհետեւ երբեք չի կարողացան քաջակերութիւն գտնել ժողովրդին կողմէ՛ այն ժողովրդին որուն ազատութեան համար այդ 200 կարիճները որոշած էին իրենց կեանքը զոհելու : Որքան սպերախտութիւն...

Տաճիկ կառավարութիւնը արդէն սեղեկացած էր այս գործին եւ շատ մը գիւղերէ «թթէր»ներ ելած էին անոնց հետեւէն : որոնք ամեն կողմէ հալածելով Պոթէվի խուճրը, զայն վերաձայն պայքանները քննեցին : Հոն «Միլին Բամբը» տեղը կսիւր սկսաւ : Պոթէվ մեծ ճարպիկութեամբ գրաւուած էր ամենէն լաւ կէտերը, եւ անկարելի էր որ թշնամին կարենար իրեն մօտենալ : Բայց թշնամին ալ հետզհետէ կը ստուարանար եւ ամբողջ գրեթէ պայքանը շղթայի մէջ առնուած էր ու փախչելու հնար չիկար : Ամբողջ գիւղեր մինչեւ, առաւօտ պատերազմը շարունակուեցաւ, հետեւեալ օրը 19ին Պոթէվ կաշիսաւէր աւելի ապահով դիրք մը գտնել, ուր կէ կարելի ըլլար աւելի երկար դիմանալ : Վերջապէս ամսոյն 20ին Տօլա կոչուած տեղը անցաւ, Հոս ամբողջ ցերեկ պատերազմը շարունակուեցաւ : Բայց թոյլ կերպով : Երբ արեւը մարը մտաւ գործերը տարբեր

վիճակ մը առին, պատերազմը երկուստեք աւելի սաստկացաւ, կարծես թէ պուլկար առեւծները նոր եռանդ զգեցած էին, բոլորն ալ ապահով տեղեր ապաստանած՝ անխնայ կը պարպէին իրենց հրացանները այդ վայրենի պաշտներուն դէմ, որոնց դիակները գետնին երեսը կը դիպուէին : Յանկարծ թշնամիներուն մէջ չփոթութիւն մը նշմարուեցաւ եւ Պոթէվ խնդիրը հասկնալու համար քիչ մը բարձրացուց գլուխը զինքը պատնէշող քարին ետեւէն, որ թշնամի անհամար դնդակները կը ցուցանէր : Բայց ահա այդ բերաւոր գրեղակներէն մէկը, որոնք քաջերու գլուխներու վրայէն կը թռչէին, կարծես զգուշանալով այդ անկեղծ առեւծներուն վնաս հասցնելէ, կարողացաւ վերջապէս իր դերը կատարել : Պոթէվ ինկաւ, ծանրապէս վիրաւորուած իր գլխէն :

Բ.
(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒՐԿԱՋ, 12 Յունիս

Հնչակեան օրկանին վերջին թիւին մէջ «Նամակ Պուրկազից» վերնագրով յօդուածի մը մէջ կարդացի ինձ ուղղեալ քանի մը տողեր :

Իրեւ Քահանայ և հոգևոր հովիւ, պարտականութեանս մէջ չը թերանայու համար, կիրակի օրերը եկեղեցոյ բեմէն կը խրատեմ ժողովուրդը որ վերջ տայ անձնական կոնքերու և զուլանայ նաեւ կարգ մը խոչնդող բաղդախնդիրներէ որոնք ժողովուրդին մէջ սպրդելով, յեղափոխութեան սուրբ անունը կը շահագործեն : Այսպիսիները իրենց կեդրոնավայր ընտրած են Պուրկազը, վասնզի երբ տեղային կառավարութիւններէն կամ ժողովուրդէն կը հալածուին, ազատ շունչ ընդին Պուրկազ կ'առնեն, ու մէկ մէկ անպարտելի հերոսներ գարձած՝ պարզ բեռնակիր դա-

տակարգին մէջ բաժանումներ առաջ կը բերեն : Այլևս անկարելի է զանոնք սանձահարել : Խուճրեր կը կազմեն, յարձակումներ կը ընեն դպրոցի և թաղական խորհուրդի վրայ, սպառնական անստորապիտ նամակներով տէնօրի կենթարկեն, բանկային ապակիները կը կտորեն, ազգարարութիւնները կը պատռեն և այլն : Ասոնց պարագայիս ներքին են Արմէն ճիւղան որ էտիրունէ, Յիլիպէ, Պուրկազ հանրածանօթ է իր վատ արարքներով, վառնայի նախկին գասատու և հաշիւաւոր Պ. Ե. որ վառնայի կառավարութեան կողմէ երկրտարի շղթայակալ բանտարկութեան դատապարտուեցաւ : Այս երկուքը Հնչակեան կուսակցութեան խմբագրատ. Ղազարին հետ միանալով՝ սկսան տեսակ տեսակ անուններու տակ շահագործել ժողովուրդը : Այսօրինակ խնդիրներու ականատես ըլլալով պարտականութիւն համարեցի և կեղեցոյ բեմէն հետեւեալը խօսիլ ժողովուրդին :

«Յեզափոխութիւնը Սուրբ և նուիրական գործ մըն է մեզի համար : ամէն ստրուկ ազգ այս ճամբով կրցած է իր ազատութիւնը ձեռք բերել, ուստի մենք ալ միանալով քաջալիւրենք ճշմարիտ յեղափոխականները և մեր հայրենիքի յիւրութեան համար աշխատինք : Սակայն այս վերջին տարիներու ընթացքին մէջ շատ մը բաղդախնդիրներ գուրսեկան, որոնք ամէն նենգութիւն ի գործ դնելով ժողովուրդը կողոպտեցին ու դեռ կը կողոպտեն, ուստի չի խաբուինք անոնց և ջախջախենք ատանկ վատերը» :

Այս ծանուցումս մեր խաչազոյ հերոս եղբայրներուն գործին չի գալով, կերթան սոճարանները ու կըսեն : «Պուրկազի քահանան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

ՈՋ ԿՐԽՂԱՆ, ՈՋ ԿՐ ՍՄԻՆ

VI

(Շար. նախորդ քիւհն)

Հաճին էր որ իր կողորդի բոլոր ուժովը կը պոռար եւ հեւալով սենեակը վազեց :

Պանդուկապետը շուտ մը Պրըշքովի ձեռքէն սպրդեցաւ և սենեակէն ալ, գոյնը նետած, առանց գլխարկի, սարսափած կը վազէր, առանց գիտնալու ինչու : Այնպէս մտածեց, թէ պանդուկ սենեակներու մէջ հըրդեհ ծագած է :

— Ծօ՛ք, ֆօ՛ք, կը պոռար Հաճին խեղացնոր : Ամբողջ բակը փողոցէն եկած խուճանով լեցուեցաւ, որ կի-

սամթութեան մէջ զիրար կը հրմշտկէր ու կը կոխկաէր :

— Ծօ՛ք, ֆօ՛ք, ֆօ՛ք, կը պոռար Հաճին, Պրըշքովի ձեռքէն բռնած սանդուխներէն վար քաշելով զայն : Անոնք բակը իջան, ու շուարած ամբոխին մէջ խառնուեցան եւ չի նայած դռնէն դուրս ելան :

Ու ակնթարթէ մը մութ փողոցի մը մէջ կորսուեցան :

— Այստատակութիւն խայտառակութեանց, առաջին անգամ խոսեցաւ Պրըշքով, կէս ժամ թափառելէ յետոյ : Փոքրիկ գրան մը առջեւը կեցած էին, ուր պուլկար պարտիզպան մը կ'ապրէր, եւ ուր եկած էին գիշերը անցընելու, քաղաքին բոլորովին հակառակ ծայրը :

— Դարձեալ զարկ, բաւ Հաճին, փողոցը դառնալով եւ մթութեան մէջ սկսաւ դիտել, որովհետեւ կը վախնար որ կը հալածուի :

— Բայց ո՞ր սատանան խելքիդ փչեց այս զուեշար : Գիտես թէ սա գիշեր ծակը պիտի ըլլայի, թէ գրամ

չունի լճարելու և թէ բոմանացին տփեցի... Սպասէ, գիտես որ ժիլէխ գրպանը չորս ֆրանք ունէի, կոր սուեք են : Եւ լաւ կը յիշեմ որ կէս օրէն յետոյ ունէի, Մէկը զիս կողոպտեք է...

— Լաւ յիշեցուցիր, այսօր քնացած տոտեղ ես ասի :

— Դո՞ւն :

— Եւ շատ լաւ եղեր է, Ասլանը այսօր Բարիզ (՝) մտեր է, երեք քապուցիներ (կաթով սուրճ) խմեր, չորս քուլիլիկ կերեր եւ վեց ալ բոմ կոնծեր է—գիտե՛ս որ երեք օրէ ի վեր սոված մնացած էր—եւ գրպանը կուտրտած սանթիմ չունէր... Չի կըրնար դուրս ելլալ... Ասա օտէն մինչեւ իրիկուն սպասեր է յարմար միջոցին փախչելու... Մտանքերը, շան պէս, հոս առնելով որ բայա չունի սկսեք են իր շուրջը պտտիլ... Ու երբ որ նկատեք են որ իր աչքը դուրս է :

(՝) 1872 թիւն Պրախլայի էն նշանաւոր ու ստաշնակարգ սրճարաններէն է :

աին ուղղած է, ուղեր են որ չորս ֆրանքը վճարէ, Ո՛րտեղէն, ձիջ ստ պահուէն ներս կը մտնեմ, կը նայեմ կուր մը : Ան կողոպտու կը պարտատուի : Ոստիկանութեան մարդ կուզարկեն... Ամբողջ սրճարանը ու շաղբութիւն կը դարձնէ... կը նայեմ որ սա անիծուածը հոս ալ պուլկար անունը պիտի խայտառակէ... Ան տտեւ աղաչեցի որ սպասեմ չորս ֆրանքը բերեմ, եւ քու ֆրանքներդ ասի :

— Եւ շատ լաւ ըրիր : Աղատեցի՞ր ես :

— Ի հայկէ :

— Ինչպէս որ զիս ալ ուրիշ խայտառակութենէ մը... Այո, բռէ, Հաճի, ինչպէս ժամանակին նկատեցիր որ պանդուկին մէջ հրդեհ կայ :

— Ահա, դուք բանալու կուգան... Բարիլէն կը վերադառնայի, քեզ գտնելու մէջ մըն ալ գրան մօտ քու եւ պանդուկապետին քաղցր խօսակցութիւնը լսեցի... Ան ստան իսկոյն յատակագիծը պարտատուեցի... կը տեսնաս որ կայսրութիւն մը կա-

դաւաճան է, կառավարութեան մատներ էն, Բայց զո՞վ հանրածանօթ ճիտանը, հոշակաւոր երուանդը, Ե՞րբ կամ ո՞ր ժամանակ թուրք քոնսիլին գոցած եմ, ե՞րբ քանի մը մարդոց քաղաքէս աքսորուիլը պահանջած եմ կառավարութիւնէ, ինչօ՞վ կրնաք հաստատել իմ փոքրատր, բեռնակիր ըլլալս: Հրամայեցք սպարէզ և հաստատեցէք: Ապա թէ ոչ զձեզ, ձեր պարագլուխներով լիբը, մպիրհ, խաչագոյ և դաւաճան պիտի ճռնչնամ, և ամէն տեղ պիտի ջանամ զգուշացնել ժողովուրդը ձեր շահատակութիւններէն:

Ձեզի ամիս մը պայմանաւանկուամ, որպէս զի տեղւոյ վրայ քննութիւն մը կատարէք և ստուգութիւնը հաստատութեան առջեւ պարզէք:

Տէր Կարապետ Բեկ, Սահակեան

«Հնչուակի» եւ իր կողմէն

Հնչակ թերթը իր վերջին 30 մայիս թուոյն մէջ «Բուրգազի սոցոսներ» անուն յօդուածով անուանարկած էր նաեւ զիս, որպէս զող, կուսակցական ստակներով կարուածատէր գործող մատնիչ եւ թուրք կառավարութեան ձեռքը գործիք եղող արքայած:

Եթէ խնդիրը անհատական կամ վաճառականական ըլլար, միջոցներ չէին պակասեր անմիջական կարգադրութիւններ ընելու այսպիսի ամենատարած ստակներով անարար յերկրած գրպարտութիւններու դէմ: Բայց որովհետեւ ազգային է, բնական է որ, ազգային շրջանակին մէջ խայտառակել այդ սոսկալի գրպարտիչները, իմ առաջին գործս պիտի ըլլայ:

Հետեւաբար կը փութամ յայտարարել հրապարակաւ որ «Հնչակ» թերթը հրատարակող պարտները եւ իրենց կոնանհարը պարտաւոր են ներկայացուցիչ մը ցուցնել Պուրկազ ներկայս հրատարակուելէն մինչ մէկ ամիս պայմանաւանկաւ, խնդիրը սեղանին վրայ քննելու համար:

Ուղարկուելու չօք խելք ունիմ... տէնեքս մտիք նայի՛ք:

Կամացուկ մը զուրը բացուեցաւ և երկու քաջերը ներս սպրդեցան:

VII

Փետրուարի սկիզբներն էր, Ռուսական հիւսիս արեւելեան քամին, սասնաշունչ մթնոլորտին մէջ կը սլուրլար: Պարսկախ ամայի ու խեղճուկ փողոցներէ մէկուն մէջ, Պրոշքով մասխոն, զարկահար կը շրջէր, Հաճիկին հետ պանդոկը ձգելէ ի վեր, քաղքին էն ծայրերը կապրէին, տաջ անմարդարնակ ջաղաքի մը մէջ, յետոյ խրճիթի չը նմանող, բացուած տանիքով ու կուտըրտած պատուհաններով որջի մը մէջ: Կապրէին ըսի, չէ, ստոնք հոն գիշերուան նրկորդ կէսը կանցուցնէին: Գիշերուան մնացած ժամանակը, ապուկ սրճարաններու մէջ կանցուցնէին, և իրենց անօ-

Պատրաստ եմ այդ մասին երթեւեկութեանց ծախքերն ալ վճարել ու ենթարկուիլ ամենամանր պարիժներու, ազգային կամ կառավարական, եթէ կարողանան հաստատել հրատարակած ստայոց գրութիւններն, իսկ հակառակ պարագային պիտի ընեմ այն ինչ որ կը վստիչ այդ անօրակելի կեղծարարներուն:

ՄԻՍՍԱԿ ԹՈՐԻԿԵԱՆ

Պուրկազ, 12 Յունիս

Յ. Գ. — Մէկ մէկ օրինակ զրկած եմ հրատարակութեան համար, Իրաւունք, Արշալոյս, Հնչակ, Ձայն հայրենաց եւ Հայրենիք լրագիրներուն:

Նոյն

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Հայ հասարակարեան

Սկսեալ 1891 թուականէն մինչեւ 1896 Պուրկազի Հնչակեան մասնաճիւղի վարչական մարմին գործոն մէկ անգամը ըլլալով, պարտք կը համարեմ հայ հասարակութեան յայտարարել թէ՛ Տիրա Միսաք Թորիկեան երբեք Հնչակեան մասնաճիւղի գանձապահ եղած չէ:

Տիրա Միսաք Թորիկեան Պուրկազ եկած օրէն ի վեր պատուաւոր պիտի մը ունեցած է, որ իր աշխուրջ աշխատութեան արդիւնքը եղած է լոկ, և ոչ թէ Պուրկազի Հնչակեան մասնաճիւղին գրամիտը շահագործման հետեւանքը, մանաւանդ որ մասնաճիւղը զօրաւոր կազմակերպութիւն մը չըլլալով, զուրկ էր հարեւաւոր ոսկիներու երես տեսնալէ:

Հետեւաբար թիւ 4 Հնչակի մէջ երկուցած կոնանհարը ստորագրութեամբ իմ կողմէն թիւ 1-ը բոլորովին սուտ գրպարտութիւն մըն է, և թերիս անձնական օրակալութեան մը արդիւնք, որ սովորաբար մուտ գտած է կուսակցութեանց մէջ:

Ցաւալի է որ յանդիմանի մէկը մէկ անուանարկելու այս ձեւը կրնայ անբանայ, շնորհիւ տգէտ կուսակցամոլներու, որոնք իրենք զիրենք յեղափոխութեան զեկաւարներ հոշակած ըլլալով՝ առանց քննութեան կը զիջանին այսպիսի ստայոց լուրեր հրատարակել և հանրութեան մտքերը պղտորել:

Պուրկազի Հնչ. Մասնաճիւղի նախկին մի սեկւարը

Պուրկազ, 13 յունիս

Թուրքիոյ պարտկելու համար, քաղաքականութեամբ ու արեւելեան հարցի լուծումովը կը զբաղէին: Բայց երբ որ, կէս գիշերէն յետոյ սրճարանի ծառաները վարագործները կը քաշէին ու կը սկսէին զատարկուած սեղանները սրբել, երկու ընկերները տրտմութեամբ դուրս կելլէին և իրենց ցուրտ օրջին մէջ կը կծկուէին, պարտալ փորով, կըրճըրով ատամներով ու փառցած ոտքերով կը պռակէին: Անպիսի սղակեւ օճախը, որ իրենց տրամագրութեան տակն էր, շարագուշակ ու դաման նայուածքով կը նայէր իրենց և փոխանակ կինստաու ջերմութիւն մը տալու, անպարտում ցուրտի պաղ օդ կը փչէր անտեսանելի կերպով, որուն Հաճիկ ամէն սուտուտ, էբր վարձատրութիւն, հայեցանքներու տարալի մը կուղղէր, զոր սոմանական էն անպատիւ և էն մութ գիշերուաններէն հաւաքած էր: Երբեք իր կողմէն ալ սաք պանի փշուր մը հայտը կը կերակրուէին, զոր Հաճիկ շարժել երբեք անգամ

ԱԶԱՏ ԲԵՍ

ՊԱՐԿԵՏ ՄԱՐԴՈՒԿԻՆ

Վառնայի «պարկեշտ» մարդուկը իր լիբրած հրատարակութեան վերջին թիւին մէջ մեզի ցածօրէն անուանարկելու շնական անպարկեշտութիւնը ունեցած էր:

Այս տիպար մարդը, որ իր այլանդակութեան մէջ եղական պիտի մնայ, և որ ստեղծ համար երբեք կարմրելու պէտքը չէ զգացած մինչեւ այսօր, խելայեղ յարձակումով մը մեզ առասպելական հարցումներու շարք մը ուղղած էր, որ իր անհեթեթ զատարկութեամբ և լրրճուկ անպարկեշտութեամբ, զլուանքի խորունկ պատուութիւնը թողոց մեր վրայ այդ գարշելի մարդուն հանդէպ:

Գրչի սրիկայութիւնը աւելի ծայրագոյն աստիճանին չէր կըրնար հասնել մարդ մը՝ որ իր ամբողջ կեանքին մէջ պարկեշտութեան նշոյլ մը իսկ չէ կրած վրան, և որ իր շիւ շահատակութիւններով նշանաւոր հանդիսացած է Վառնայի մէջ:

Մենք այդ արարածին անհատական կեանքին անցեալը քրքրելու բնաւ հետաքրքիր չի պիտի ըլլայինք, եթէ մեր շատ փութակալ ու շարժաւոր երիտասարդութիւն իր Արդոսի աչքերը ծակած չըլլային և գոյութիւն չունեցող դէպքերու մէջ մեր պատիւը կասկածելի ներկայացնելու անխելքութիւնը չի փորձուէր իր կայմէն:

Իսխատիք մը, ո՛րքան ալ ծանր ու անպատուաբեր ըլլայ, պէտք է քիչ շատ վստահելի ու անբասիր անձէ մը բղխի, որպէս զի լրջօրէն Լարոզանայ սղգիլ մեր վրայ:

«Գաղտնիք»ը, զոր ան պարկեշտ մարդուկը վերագրած էր մեզի, լոկ իր երեւակայութեան մէջ գոյութիւն ունի, բանի որ մենք խնդրոյ նիւթ եղող աղջկան

հետ ոչ այդի գացած ենք, ոչ անանին ու ծածուկ յարաբերութիւններ ունեցած ենք խաղին պատրաստութեան տեսն կամ ներկայացումէն վերջը:

Բայց գոյունիքը պէտք է փրնտընի իր տնհատական կեանքին անցեալ երանելի օրերուն մէջ:

Իսկապէս գաղտնիք են անոնք, իր յոյն կնոջ մը հետ հարկադրեալ ամուսնութեան օրերէն սկսեալ մինչեւ այն անմոռանալի օրերը, երբ հաճի Փաստիա ամուսնային զրօսարանին մէջ համբուուող Ս. Ս. ի դէմը անցած թուրիկ ջիղերուն յուզեալ կրակը կը մարէր կապոյտ օդին պատիկ մը գաւաթը ճնկելով ամէն անգամ՝ երբ այդ կինը ձայնի գոգարիչ թրթուրներով իր սիրտը մորմոքող սա լկախ տողերը կերպէր:

«Կէօքսիւնտէքի կիւլ իչին ձանըմըտա վերիբիմ սէնին իչին»

Հիմա պարկեշտ խմբագիրը, իր «կիւլէլիմ» կեանքին այդ յիշատակելի օրերուն բանագոչանքին մէջ ինկած է անշուշտ, և նախանձաւ կատարութեամբ մը կը պատանցէ այն տուղերը՝ որոնք իրեն և Առապ Ս. ին համար միայն ստեղծուած ըլլալու էին, և որոնք տակաւին Հաճի Բանաքոյի զրօսալայրերէն ներս սպրդելու անվայի համարձակութիւնը չեն ունեցած բարբախտաբար:

Ի՞նչ հաճոյք կը զգար տուն տեղ կաղմած այդ «պարկեշտ» խմբագիրը ամէն իրիկուն այդ «ալա թուրքա մանի»ները տմբողջ ահանջ կտրած մտիկ ընելով:

Գաղտնիք պէտք է փնտռել, երբ այդ «պարկեշտ» արարածը, 1894ին, Երբեքնցի Թորոս Լեւոնի վէպին, իր տաճկերէնի վերածած թատերգութեան ներկայացման տեսն զեր կատարեց, քովիկը ունենալով հասարակաց կին մը, որուն համարս Վառնայի մէջ չի լսելու գծախտութիւնը ոչ սք ունեցած է:

Կուտ էր, հուսնօրէն պանդոկի սաղջաքին համար: Բայց և այնպէս Պրոշքով ալ երկու օրէ ի վեր բան մը չէր կրած:

Ան հիմա իր քերթումներու սասք օրինակը կը կրէր զոր պուկար խանութէ մը ետ առած էր պուկար հարուստներու ծախելու համար, Հազիւ հիմակ խելքի եկաւ: Պէտքն էր զինքը թելագործը այդ վերջին միջոցը ի գործ գնէր սովէ չի մեռնելու համար: Իր մարդկային բնոյթը սոսկալի կերպով կը խուղէր այդօրինակ մուրացկանութիւնէ մը որ թէև յարգելի բայց ստորնացուցիչ միջոց մըն էր: Երբեմն կը կենար, թուրքերը նեւելու ու սուտ վերագաւառու կը պատրաստուէր: Բայց գարձեալ կը շարունակէր քալել:

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄԱՆԱՆ

(Շարունակելի)

կանոնադրապէս կը բնիք հացագործի մը ողորմութեան շնորհիւ:

Երբեքնցի հնարաղեւ Հաճիկ գաւաթ մը տաք կաթով սուրճ մուրալու ձեւը կը գունէր, թէ իրեն և թէ Պրոշքովին համար: Նոյն իսկ թուրք ալ կը խաղար և: Մաքեօսնօքիին պէս վարպետ էր գոզնալու մէջ: Շահը, որովհետեւ միշտ կը շահէր ծխախոտի և մի քանի մերկ-պոչկարներու օգնելու կը գործածէր Պրոշքով սղգիլին քնասէր այնչափ ալ խեղճ էր և մինակը բան մը չէր կրնար մտալ: Թէև Հաճիի ստիպմամբ հօրը երկու անգամ նամակ գրեց բայց երկու անգամուն ալ ցատկատուութեամբ պատած էր: Անվերջ թափաստութիւնը ու անամար պէտքերը՝ զիս չէին կրցած անոր հոգիին գոտգոտիւնը սպաննել: Այստեղ, երջանկութեան մէջ թէև զիս անպատիւ ու պատուաւոր է, բայց անպարտ է, ձմեռային ցրտաշունչ քամիներուն ու սովորահաւիթքի դէմ, բայց հիմա ան ծանր խնկերու մէջ սուղուած կը քալէր:

Հաճիկ երկու օր էր որ բանտար-

Գաղտնիք պէտք է փնտռել այն դատապարտելի յոռութեան մէջ, որ այդ պարկեշտ մարդու կը պահէր 3-4 տարիներ առաջ անխիղճ, ծխած սրկաներ իր քթին տակ, համեստ յարկեր կը պղծէին և գեռատի աղիկներու յաւէտ դժբաղդութեան պատճառ կը դառնային:

Այս ամէնքը գիտնալով մենք երբեք անհանգիստ չենք ըլլար այդ մարդու կին ըսածներէն:

Գիտենք մանաւանդ որ Վանայի «պարկեշտ» մարդու կը իր երէկուան պաշտածը այսօր այրելու և այսօրուած այրածը վազը պաշտելու լարախաղացի ճկունութիւնն ունի:

Այն անձին համար, զոր այսօր անպատիւ մը, աղայ մը կը ներկայացնէ, գեռ երէկ իր թերթին սիւնակներուն մէջ ճգակտոր ելլելու անտիճան կը պտար թէ միակ արժանի մարդն է, որուն կարելի է վստահիլ աղջ. վարձարաններու հոգաբարձութեան պաշտօնը:

Եւ դարձեալ այդ տղայ կոչուած անձն էր որ 2-3 տարի իշխանական դատարաններու ու ընտր աշխարհի առջեւ իր չըլլալիք թերթը ներկայացուց, մարդու կին պապատապին գիմուսներուն վրայ:

Աներեսութիւնը այն աստիճանի հասցուցած է այդ մարդու կը որ, իր վերջին խայտառակութիւնը փոխելէ առաջ պատուիրակութիւն մը զրկած է նոյն Պ. Միհրան Զգոնեանին առաջարկելով որ իր բացատրութեան մէջ քանի կէտերը, յանձն առնէ փոխել, որպէս զի զայն կարողանայ հրատարակել:

Յաջորդ թիւին մէջ այդ աստիճան անպատիւ ներկայացնող մարդուն բացատրութիւնը ինչպէ՞ս յանձն կառնէր տպել, չի պիտի կրնայի հասկնալ, եթէ արդէն ճանչցած չըլլայի՝ ազգին պատիւն ու բարոյականութիւն ինչպէ՞ք նախանձախնդիր ձեւացնող այդ մէկ հատիկ մարդու կին անցեալն ու ներկան, եւ եթէ ականջովս լսած չըլլայի նաև սա շատ նշանակալից խօսքերը զորս այդ մարդու կը արտասանեց, նրա երկու շարժ առաջ իրեն անձամբ գացինք բացատրութիւն պահանջելու համար. «Եթէ ես ԲՈՅՐ ՄԸ ՈՒՆԵՆԱՅԻ, ԶԵՁԻ ՊԵՍ ՊԱՏՈՒԱԽՈՐ ԵՒ ԱԶՆԻԻ ԵՐԻՏԱՍԵՐԳՆԵՐՈՒ ԶԵՏ ԽԱՂԱՆ ՏԱԼՈՒ ԶԻՒ ՎԱՐԱՆԵՐ ԵՐԲԷՔ»:

Այս նկարագիրը ունեցող մարդու կին որ բռնածին հաւատալու է...

Ամենէն լաւն է ոչ մէկին չի հաւատալ:

Եւ սակայն գործեալ կը տեսնուինք:

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Տօքթ. Օրմանեան անգամ կարգուեր է քաղաքապետական առողջապահական յանձնաժողովին:

— Խարբերգի մէջ, նախաձեռնութեամբ ծանօթ գրագէտ և ուսուցիչ Յովհաննէս Էֆ. Յարութիւնեանի (Թլկատինցի) բացուեր է լսարան մը՝ որ մեծ համակրութեամբ ողջունուեր է տեղւոյն բնակչութեան կողմէ: Լսարանին մէջ խօսուած նիւթերը կը ձգտին եղեր բարձրացնել ժողովուրդին բարոյական և ուսումնական մտկարգակը:

— Խարբերգի կրօնական և քաղաքական ժողովներու գիւտնիքը կը հեռագրեն պատրիարքարան թէ՛ հրաժարեալ առաջնորդ Տէր Պետրոս վարդապետ չէ ուղեր առաջնորդական կնիքն ու տոմարները յանձնել Տ. Խաչատուր քահանային որ առժամանակեայ կերպով կը վարէ վիճակին հովութիւնը: Միւս կողմէ յիշեալ ժողովները որոնք ակէ առաջ հրաժարած էին և որոնց հրաժարականը մերժուած էր պատրիարքարանի կողմէ, մանրամասն տեղեկագրով մը Ազգ. վարչութեան յայտնած են ընտր այն զեղծումները որոնց հեղինակ հանցիտացած է Պետրոս վարդապետը:

— Բաղմովէպի խմբագրութիւնը յուլիս ամսուան համար յաւելուած մը հրատարակած ըլլալով կը յայտարարէ թէ՛ իր բաժանորդները յուլիսի, օգոստոսի և սեպտեմբերի սովորական պրակներու տեղ, օգոստոսին վերջերը պիտի ստանան «Բաղմովէպի» ծաւալով 15 թերթէ կազմուած շքեղ և ճոխ գիրք մը որ ի յիշատակ ուխտին երկհարկւարած եակին լոյս պիտի տեսնէ, պարունակելով հետաքրքրական յօդուածներ զարդարուած բազմաթիւ նոր պատկերներով: Եւ որպէս զի բաժանորդները չի զրկուին իրենց իրաւունքէն, նոյն թերթին լոյս տեսնալէն առաջ, ամիսը երկու անգամ յաւելուած պիտի հրատարակուի:

— Թիֆլիսի հայոց թատերասիրաց ընկերութիւնը, որուն հիմնարկութեան լուրը մեր անցեալ թուով հազորգած էինք, իր կանոնագիրը ներկայացուցած է Թիֆլիզի նահանգային վարչութեան որ իր հաւանութիւնը տուած է և զրկած է Բեթերսպուրկ վաւերացնելու համար:

— Քաղաքական ժողովը Ղալաթիոյ խորհրդարանին մէջ յուլիս 13ին գումարուել է. ուսումնական խորհրդոյ ատենապետ Տօքթ. Թորգոմեան և Հրանտ Ա. սատուր ժողովոյ ներկայանալով բերանացի բացատրութիւն տուեր են ուսուցչաց օգնութեան զննու-

կի և ապահովագրութեան համար պատրաստուած ծրագրին մէկ քանի կէտերուն մասին, որ ինչ ինչ բարեփոխումներով ընդունուեր և հաստատուեր է:

— Կը լսենք թէ հանրածանօթ «չվալիէին» կողմէ նոր պատուիրակութիւն մը Օտէսա գացեր է բերելու համար անցեալ ձմեռուան հանգանակութեան մնացած բաւական կարելի մէկ գումարը, զոր հանգանակողները վարձարած են եղեր իմանալով «չվալիէին» խարբարութիւնը և որբերուանունը շահագործած ըլլալով: Յիշեալ պատգամաւորութիւնը ամէն շանք պիտի թափէ եղեր համոզելու համար Օտէսայի մարզիկը, որոնց քով պահուած է հանգանակութեան արգիւնը, որպէսզի յանձնեն զայն՝ այդ անամօթ «չվալիէին» և իր նոր շահակցներուն գրգռանքը պարտացնելու համար:

Ինչ վրէժներ մեր պաշտօնական մարմինները, ինչո՞ւ չեն հետաքրքրուիր անցած դարձածով և պէտք եղած միջոցները ձեռք չեն առներ Ոտէսայի անտեղեակ ազգայինները լուսաբանելու և խաչագողութեան առաջին առնելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Անցեալ թուով իմացուցած էինք Սուլթանին պալատին մէջ ծագած հրդեհը: Հասած նոր մանրամասնութիւններէ կը տեղեկանանք որ, այդ հրդեհը շարամտութեան մը արգիւնք է եղեր: Քանի մը հոգինք ձեռքաւարուած են պալատի պաշտօնեաներէն:

Նաև Դամասկոսի երեք փաշաներուն դէմ ձեռքաւարութեան հրամանագիր տրուեր է: Անոնցմէ երկուքը ռուսական հիւպատոսարանը ապաստաներ են, որ կը մերժէ զանոնք թուրք իշխանութեանց յանձնել, մինչև որ Պոստոյ իր դեպքանէն հրահանգ չըստանայ:

— Օսմանեան կառավարութիւնը Զուլիջնիոյ իշխանութեանց գիմուած ըրեր է, հոն ապաստանած ժէօն Թիւրքերուն և Հայ յեղափոխականներուն շարամիտ հրատարակութեանց արգիւնք ինդրելով: Զուլիջնիական կառավարութիւնը իմացուցեր է թէ պէտք եղած միջոցները ձեռք պիտի առնուին:

— Սուլթանի առաջին կինը երկուրեակ մը ծներ է, որուն մէկը մանչ և միւսը աղջիկ է եղեր: Հակառակ սովորութեան՝ այս ծնունդները պաշտօնապէս յայտարարուած չեն, ու 21 թընդանօթի հարուածներ չեն ողջունած այս երջանիկ դէպքը:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա
Սօֆիաի մէջ, Տ. Յակոբ Իսկէնատէր, նախկին խմբագիր Լա Պիւլկարի և Բուրիէ տէ Պալքան թերթի բնու, այս անգամ սկսած է հրատարակել Ֆրանսերէն լեզուով «Լը Մէսսաժ տէ Պալքան» որ այժմ շարաւր մէկ անգամ կը հրատարակուի:

— Սօպրանիէի զինուորական գործոց յանձնաժողովը կը շարունակէ պնդել բարձրաստիճան զինուորականներու ամսականներուն յապաւման վրայ, հակառակ պատերազմական նախարար Բարբիքովին հրաժարական տալու սպանալիքին:

— Մակեդոնական կօմիտէի օսկան «Բէֆորմի» կը յայտարարէ թէ՛ կօմիտէն բնաւ մասնակցութիւն չէ ունեցած վերջերս Պ. Սարաֆօֆի կազմած միթիսկներուն ու ջաւ կը յայտնէ որ Պուլկարիոյ մէջ կը գտնուին քաղաքական կուսակցութիւններ որոնք կը ջանան իրենց ինպատու շահագործել մակեդոնական դատը:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Օլիֆանդէն «Թամազ»-ի տրուած հեռագիր մը կիմացնէ թէ պօէրները կրկին գրաւեր են Դարոյի նախ շրջակայքը և կորեր են Լօրէնցօ: Մարքէզին երկաթուղոյն երթեւեկութիւնը:

— Ամսոյս 19ին Օրանկ-Բուրի մէջ պօէրները յարձակեր են անգլ. զօրքերուն վրայ և մեծ կորուստ պատճառներ են անոնց. յարձակումը աւելի դիւրաւ կատարուեր է մացառներուն հըրդեհին պատճառաւ, որ միանգամայն քանի մը հազար քիւսմէթի վրայ տարածուած էր:

— 300 մարդէ բաղկացած արշաւախումբ մը Մալան և Նմիթ զօրավարներուն հրամանատարութեամբ, Բիչմօնա քաղաքին առջեւ, յարձակեր է անգլիացոց վրայ: Պօէրները յաջողօր իմանալով որ անգլիացոց օգնական զօրք զրկուեր է, ետ քաշուեր են 12 գերի առնելով և բազմաթիւ խանութիւն կողպտելով:

ԳԱԼՈՒՍՏ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ր

(Ուլիցա «Չար Պօրխ»)՝

Կը պատրաստէ ամեն ձեւով և ընտիր ճաշակով կօշիկներ, յանձնարարութիւնները փութով և ճշտութեամբ կը կատարուին:

Կը խնդրուի յարգոյ յաճախորդներէն որ անգամ մը բարեհաճին փորձել մեր կօշիկները, համոզուելու համար անոնց գիմացկութեան ու ճաշակաւորութեան:

Գիտենք խիստ դիւրամատչելի:

Отговорникъ:
Д-ръ М.Х.ЖРДІЧЪ ВАРГАНЪ
Печ. «Взаимность» — Варна.

ՆՈՒՐՈՍ-ՍՈՒՐՈՍ